ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ. *Գյումրու «Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ*

ՀԱՍՑԵ. *ք. Գյումրի, Շիրակացի 13*

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔ. *www.enricomatte.com*

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ *enricomatte@mail.ru*

1. Ընկերությունը հանդիսանում է 100% պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն, որը ունի տասը անվանական բաժնետոմսերը, որոնք պատկանում են Հայաստանի Հանրհապետությանը: Պետական բաժնեմասի կառավարման լիազորությունները վերապահված են ՀՀ Շիրակի մարզպետին:

2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համաձայն ընկերության կանոնադրության և Կորպորատիվ կառավարման կանոնագրքի պահանջների, ընկերությունն ունի հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.

ա. Բաժնետերերի ընդհանուր ժողով.

Քանի որ ընկերությունը հանդիսանում է 100% պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն, որի բաժնետոմսերը ամբողջությամբ պատկանում են Հայաստանի հանրհապետությանը, ուստի ընկերությունը բաժնետերերի ընդհանուր ժողով չունի:

Ընկերության կառավարման լիազորությունները վերապահված են ՀՀ Շիրակի մարզպետին:

բ. Խորհուրդ.

Քանի որ ընկերությունը ունի միայն մեկ բաժնետեր, ուստի ընկերությունում խորհուրդ չի ստեղծվել, համաձայն <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 83 հոդվածի 1 կետի՝ խորհուրդը պետք է ստեղծվի 50 և ավելի բաժնետեր ունեցող ընկերությունում:

գ. Խորհրդի հանձնաժողովներ

Քանի որ ընկերությունը չունի խորհուրդ, հետևաբար չունի նաև խորհրդի հանձնաժողովներ:

դ. Գործադիր մարմին

Ընկերությունը գործադիր մարմին չունի,

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր տնօրենը,

Ընկերության նշանակալից բաժնետերերն են՝

Ընկերությունը ունի մեկ բաժնետեր, ի դեմս Հայաստանի Հանրհապետության, որը տիրապետում է ընկերության բոլոր 10/տասը/ անվանական բաժնետոմսերին, յուրաքանչյուրը 2400,0հազ. դրամ անվանական արժեքով, որը կազմում է ընկերության 24000,0հազ. դրամ կանոնադրական կապիտալի 100%-ը:

3. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԲԸԺ)

Քանի որ ընկերությունը հանդիսանում է 100% պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն որի բաժնետոմսերը ամբողջությամբ պատկանում են Հայաստանի

Հանրհապետությանը, հետևաբար հաշվետու տարում բաժնետերերի ընդհանուր ժողով չի գումարվել:

Ընկերության կառավարման լիազորությունները վերապահված են ՀՀ Շիրակի մարզպետին:

4. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ընկերությունը չունի հանձնաժողովներ որովհետև չունի խորհուրդ:

5. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

2024թ. ընթացքում Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացրել է գործադիր տնօրենը, որը նշանակվում է ՀՀ Շիրակի մարզպետի կողմից՝ գործադիր տնօրենի պաշտոնի համար կայացած մրցույթի արդյունքի հիման վրա:

Ընկերության գործադիր տնօրեն է՝	*Արթուր Մանուկյան*
Ծննդյան օր, ամիս, տարեթիվ	*« 01 » հունվար 1970թ.*
Կրթություն	*բարձրագույն*
Աշխատանքային փորձառություն	*31 տարի*
Հիմնական որակավորում	*բժիշկ համաճարակաբան*
Ընկերությունում աշխատած տարիներ	2 տարի

Անդամություն *Ընկերության գործադիր տնօրենը այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ի անդամ չի հանդիսանում:*

Անձնական պարտականություններ և խնդիրներ *Ընկերության գործադիր տնօրենի պարտականությունները՝*

ա. Տնօրինում է ընկերության շարժական և անշարժ միջոցներին, այդ թվում՝ գույքին, ֆինանսական միջոցներին, իրականացնում է գործարքներ ընկերության անունից,

բ. Ներկայացնում է ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում,

գ. Գործում է առանց լիազորագրի,

դ. Տալիս է լիազորագիր,

ե. Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային,

զ. Բանկերում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,

է. Առաջարկություններ է նախապատրաստում և ներկայացնում Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ,

ը. Ընկերության ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը,

թ. Հիմնադիրի լիազոր մարմնի հաստատմանն է ներկայացնում Ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքը, հաստիքացուցակը, ծախսային նախահաշիվը,

ժ. Իր լիազորությունների շրջանակներում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է դրանց կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

ի. Համաձայն գործող օրենսդրության աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության վարձու աշխատողներին,

լ. Ընկերության աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսական և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

խ. Իրավասու է իր հրամանով ստեղծել վարչական խորհուրդ, կատարում է Ընկերության վարչական խորհրդի նախագահի պարտականությունները:

6. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

2024 թվականին ընկերությունում իրականացվել է ներքին աուդիտ :

7. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ընկերությունում խորհուրդ ստեղծված չէ, հետևաբար կորպորատիվ քարտուղար չունի:

8. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ

2024 թվականին ընկերությունում արտաքին աուդիտ չի իրականացվել:

10. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերության տարեկան ֆինանսատնտեսագիտական մոնիտորինգի և շահաբաժնի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվել են ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմին, որպես 100% պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն,

2024թ-ի Շահութահարկի հաշվարկը ներկայացվել է ՀՀ ԿԱ պետ եկամուտների կոմիտե,

Ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվել են ՀՀ Առողջապահության նախարարության Պետական Առողջապահական Գործակալության:

Ընկերության տնօրեն՝ Ա.Մանուկյան

MANUKYAN ARTUR 1101700769

Digitally signed by MANUKYAN ARTUR 1101700769
Date: 2025.04.28 15:16:03 AMST